ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» դեկտեմբերի 2020թ.** **N -----Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

### ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով`

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Գայանե Մելքոմ Մելքոմյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## «ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Գայանե Մելքոմ Մելքոմյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գայանե Մելքոմ Մելքոմյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գայանե Մելքոմ Մելքոմյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆ

Ծնվել է 1987թ. սեպտեմբերի 29-ին Մանչեստր քաղաքում (Միացյալ Թագավորություն):

**Կրթություն**

- 1993-2003թթ. սովորել է Երևանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցում
- 2003-2007թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի (Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան) իրավագիտության ֆակուլտետը
- 2007-2009թթ. սովորել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի (Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան) իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով միջազգային գործարարական իրավունքի մագիստրոսի աստիճան
- 2009-2010թթ. սովորել է Մաքգիլի համալսարանում՝ ստանալով իրավունքի մագիստրոսի աստիճան (Մոնրեալ, Կանադա)

**Աշխատանքային գործունեություն և հանրային ծառայություն**

- 2007 մարտ-ապրիլ ամիսներին անցել է աշխատանքային պրակտիկա Միջազգային առևտրային պալատի Միջազգային արբիտրաժային դատարանի քարտուղարությունում (Փարիզ, Ֆրանսիա)
- 2007-2009թթ. աշխատել է «Թրեյդերս հաուս» ՍՊԸ-ում` զբաղեցնելով իրավաբանի, այնուհետ` գլխավոր իրավաբանի և գրասենյակի կառավարչի պաշտոնը
- 2010-2015թթ. աշխատել է «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ում (2015թ.-ի օգոստոսից՝ «Յուքոմ» ՍՊԸ)՝ զբաղեցնելով իրավաբանի, այնուհետ՝ ավագ իրավաբանի պաշտոնը
- 2015-2017թթ. աշխատել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով գլխավոր իրավախորհրդատուի պաշտոնը

- 2017թ.-ից աշխատում է «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով գլխավոր իրավախորհրդատուի պաշտոնը
- 2018թ.-ից «Էլեկտրոնային առողջապահության ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- 2018թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ
- 2018թ. սեպտեմբեր - 2019թ. փետրվար ամիսներին եղել է Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը
- 2019թ.-ից Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

Այլ գործունեություն

- 2010թ. համահիմնադրել է Երևանի հանրային կանաչ տարածքների պաշտպանությամբ զբաղվող «Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնությունը
- 2013թ.-ից «Քաղաքական դիսկուրս» հանդեսի հիմնադիր համախմբագիր է, քաղաքագիտական, քաղաքատնտեսական հոդվածների թարգմանիչ

Անկուսակցական է:

Ամուսնացած է: